

## Ֆրիդոմհաուզի «Ազատությունը աշխարհում 2016 թ. ինդեքս»

«Ֆրիդոմհաուզը» (Freedom House)-ը 2016թ. հունվարի 27-ին հրապարակել է «Ազատությունը աշխարհում 2016» (Freedom in the World 2016) տարեկան զեկույցը<sup>1</sup>, որում ներկայացվում է աշխարհի 195 երկրում և 15 տարածքում անհատների քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների համեմատական գնահատականը: Հայաստանի, ինչպես նաև Վրաստանի և Ադրբեջանի համար այս ինդեքսը գնահատվում է սկսած 1992թ-ից:

**Ինդեքսի գնահատման մեթոդաբանությունը.** Հաշվարկման հիմքում ընկած են 25 ցուցանիշներ, որոնցից յուրաքանչյուրի գնահատման արդյունքում երկրին կամ տարածքին տրվում է 0-ից մինչև 4 միավոր, այսինքն՝ որևէ երկրի առավելագույն համախառն գնահատականը կարող է կազմել 100 միավոր: Ստացված գնահատականների հիման վրա յուրաքանչյուր առանձին երկրի համար հաշվարկվում է երկու՝ «**Քաղաքական իրավունքների**» և «**Քաղաքացիական ազատությունների**» ինդեքսներ, որոնց միջինը կազմում է տվյալ երկրի միասնական՝ «**Ազատությունը աշխարհում**» վարկանիշը (ինդեքսը): Վերջիններիս համար կիրառվում է «1»-ից մինչև «7» գնահատման համակարգ, որի հիման վրա երկրներին դասակարգում են հետևյալ երեք կատեգորիայի. «1.0 - 2.5» գնահատական ստացած երկրները համարվում են «**ազատ**», «3 - 5»-ը՝ «**մասնակի ազատ**» և «5.5 - 7.0»-ը՝ «**ոչ ազատ**» երկրներ: 2016թ.-ի զեկույցում դիտարկված 195 երկրներից 86 երկիր (44%) գնահատվել է որպես «**ազատ**», 59 երկիր (30%)՝ որպես «**մասնակի ազատ**» և 50 երկիր (26%)՝ որպես «**ոչ ազատ**»:

«Ազատությունը աշխարհում» 2016թ. ինդեքսի գնահատման հիմքում 2015թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համընդգրկուն իրադարձություններն են: Հաշվետվությունները պատրաստելու ժամանակ վերլուծաբանները օգտվում են տեղեկատվության բազմազան աղբյուրներից, ներառյալ արտասահմանյան և տեղական օրաթերթերը, ամսագրերը, ակադեմիական վերլուծությունները, հասարակական կազմակերպությունների, գիտահետազոտական կենտրոնների, անհատ մասնագետների հետ կապերը, ինչպես նաև այցելում են տարածաշրջան՝ իրավիճակին տեղում ծանոթանալու նպատակով:

<sup>1</sup>Տե՛ս **Freedom in the World 2016/ Anxious Dictators, Wavering Democracies: Global Freedom under Pressure.**  
[https://freedomhouse.org/sites/default/files/FH\\_FITW\\_Report\\_2016.pdf](https://freedomhouse.org/sites/default/files/FH_FITW_Report_2016.pdf):

**Հայաստանի գնահատականները.** Հայաստանի «Քաղաքական իրավունքների» և «Քաղաքացիական ազատությունների» 2016թ. ինդեքսները նախորդ տարվա համեմատ մնացել են անփոփոխ և դրանց միասնական (միջին) ինդեքսը կազմել է «4.5», համաձայն որի Հայաստանը, ինչպես և նախորդ տարի, Ֆրիդոմհաուզի կողմից դիտարկվում է որպես «մասնակի ազատ» երկիր (տե՛ս աղյուսակ 1-2)<sup>2</sup>:

«Ազատությունը աշխարհում 2016» զեկույցում չի փոխվել նաև **Լեռնային Ղարաբաղի** միասնական (միջին) ինդեքսը և կազմում է «5», համաձայն որի Լեռնային Ղարաբաղը, ինչպես և նախորդ տարի, դիտարկվում է որպես «մասնակի ազատ» տարածք<sup>3</sup>:

**Հայաստանը փարածաշրջանային համապարկերում.** Քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ոլորտում բարեփոխումների ընթացքի 2015թ. գնահատականով Հայաստանը զիջում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բոլոր երկրներին, իսկ նախկին ԽՍՀՄ երկրներից զիջում է Մերձբալթյան երկրներին, Ուկրաինային, Մոլդովային և Վրաստանին:

**Հարավկովկասյան տարածաշրջանի երկրներից** Հայաստանը զգալիորեն գերազանցում է Ադրբեջանին, որը համարվում է «ոչ ազատ երկիր»: Ընդ որում, Ֆրիդոմհաուզի 2016թ. զեկույցում Ադրբեջանի քաղաքական ազատությունների ինդեքսը, հետևաբար նաև՝ ազատության միասնական (միջին) ինդեքսը վատացել է, քանի որ 2015թ. ընթացքում այդ երկրում տեղի են ունեցել ազատությունը սահմանափակող իրադարձություններ: Մասնավորապես, Ֆրիդոմհաուզի փորձագետները նշում են Ադրբեջանում կոպիտ խախտումներով անցկացված պառլամենտական ընտրությունների մասին<sup>4</sup>: Ինչ վերաբերում է Վրաստանին, այստեղ նախորդ տարվա համեմատ ոչ մի փոփոխություն չի գրանցվել, երկրի ազատության միասնական (միջին) ինդեքսը կազմում է «3» և Վրաստանը, ըստ Ֆրիդոմհաուզի, համարվում է «մասնակի ազատ երկիր»:

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների քաղաքական իրավունքների ու քաղաքացիական ազատությունների 2015թ. գնահատականները և 1992-2015թթ. Հայաստանի ու հարավկովկասյան մյուս երկրների գնահատականները ներկայացված են ստորև բերված աղյուսակներ 1-2-ում:

---

2 Աղբյուրը՝ *Freedom in the World 2016/ Anxious Dictators, Wavering Democracies: Global Freedom under Pressure*, էջ 20: [https://freedomhouse.org/sites/default/files/FH\\_FITW\\_Report\\_2016.pdf](https://freedomhouse.org/sites/default/files/FH_FITW_Report_2016.pdf):

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 24:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 17:

«Ֆրիդոմհաուզի» գնահատականները նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների բարեփոխումների ընթացքի վերաբերյալ (2016 թ.)<sup>5</sup>

Աղյուսակ 1

| Երկիր         | Ազատության ստատուսը | Քաղաքական իրավունքների ինդեքս | Քաղաքացիական ազատությունների ինդեքս | Ազատության Վարկանիշ (միասնական ինդեքս) | Համախառն գնահատականը | Միտումը |
|---------------|---------------------|-------------------------------|-------------------------------------|--|----------------------|---------|
| Չեխիա         | Ազատ                | 1                             | 1                                   | 1                                      | 95                   |         |
| Էստոնիա       | Ազատ                | 1                             | 1                                   | 1                                      | 94                   |         |
| Լեհաստան      | Ազատ                | 1                             | 1                                   | 1                                      | 93                   |         |
| Սլովենիա      | Ազատ                | 1                             | 1                                   | 1                                      | 92                   |         |
| Լիտվա         | Ազատ                | 1                             | 1                                   | 1                                      | 91                   |         |
| Սլովակիա      | Ազատ                | 1                             | 1                                   | 1                                      | 89                   |         |
| Խորվաթիա      | Ազատ                | 1                             | 2                                   | 1.5                                    | 87                   |         |
| Լատվիա        | Ազատ                | 2                             | 2                                   | 2                                      | 86                   |         |
| Ռումինիա      | Ազատ                | 2                             | 2                                   | 2                                      | 83                   |         |
| Բուլղարիա     | Ազատ                | 2                             | 2                                   | 2                                      | 80                   |         |
| Հունգարիա     | Ազատ                | 2                             | 2                                   | 2                                      | 79                   | ↓       |
| Սերբիա        | Ազատ                | 2                             | 2                                   | 2                                      | 78                   |         |
| Մոնտենեգրո    | Մասնակի ազատ        | 3                             | 3                                   | 3                                      | 70                   | ↓       |
| Ալբանիա       | Մասնակի ազատ        | 3                             | 3                                   | 3                                      | 67                   |         |
| Վրաստան       | Մասնակի ազատ        | 3                             | 3                                   | 3                                      | 64                   |         |
| Ուկրաինա      | Մասնակի ազատ        | 3                             | 3                                   | 3                                      | 61                   |         |
| Մոլդովա       | Մասնակի ազատ        | 3                             | 3                                   | 3                                      | 60                   | ↓       |
| Մակեդոնիա     | Մասնակի ազատ        | 4                             | 3                                   | 3.5                                    | 57                   | ↓       |
| Բոսնիա-Հերց.  | Մասնակի ազատ        | 4                             | 3                                   | 3.5                                    | 57                   |         |
| Թուրքիա       | Մասնակի ազատ        | 3                             | 4                                   | 3.5                                    | 53                   | ↓       |
| Կոսովո        | Մասնակի ազատ        | 3                             | 4                                   | 3.5                                    | 52                   |         |
| Հայաստան      | Մասնակի ազատ        | 5                             | 4                                   | 4.5                                    | 46                   |         |
| Ղրղզստան      | Մասնակի ազատ        | 5                             | 5                                   | 5                                      | 38                   |         |
| Լեռն. Ղարաբաղ | Մասնակի ազատ        | 5                             | 5                                   | 5                                      | 33                   |         |
| Ղազախստան     | Ոչ ազատ             | 6                             | 5                                   | 5.5                                    | 24                   |         |
| Ռուսաստան     | Ոչ ազատ             | 6                             | 6                                   | 6                                      | 22                   |         |
| Իրան          | Ոչ ազատ             | 6                             | 6                                   | 6                                      | 17                   |         |
| Բելառուս      | Ոչ ազատ             | 7                             | 6                                   | 6.5                                    | 17                   |         |
| Տաջիկստան     | Ոչ ազատ             | 7                             | 6                                   | 6.5                                    | 16                   | ↓       |
| Ադրբեջան      | Ոչ ազատ             | 7                             | 6                                   | 6.5                                    | 16                   |         |
| Թուրքմենստան  | Ոչ ազատ             | 7                             | 7                                   | 7                                      | 4                    |         |

<sup>5</sup> Աղբյուրը՝ *Freedom in the World 2016/ Anxious Dictators, Wavering Democracies: Global Freedom under Pressure*, էջ 7: [https://freedomhouse.org/sites/default/files/FH\\_FITW\\_Report\\_2016.pdf](https://freedomhouse.org/sites/default/files/FH_FITW_Report_2016.pdf)

Ինդեքսն արտացոլում է 2015 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը տեղի ունեցած համաշխարհային իրադարձությունները:

**«Ֆրիդոմհաուզի» գնահատականները Հարավկովկասյան երկրների քաղաքական իրավունքների  
և  
քաղաքացիական ազատության բարեփոխումների ընթացքի մասին  
(1991 - 2015 թթ.)**

**Աղյուսակ 2**

| «Ազատությունը աշխարհում» հրապարակումը | Ինդեքսների անվանումը                  | Հայաստան     | Վրաստան      | Ադրբեջան     |
|---------------------------------------|---------------------------------------|--------------|--------------|--------------|
| 1991-92                               | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 5            | 6            | 5            |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 5            | 5            | 5            |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Ոչ ազատ      | Մասնակի ազատ |
| 1992-93                               | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 4            | 4            | 5            |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 3            | 5            | 5            |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Մասնակի ազատ |
| 1993-94                               | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 3            | 5            | 6            |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 5            | 6            |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Ոչ ազատ      |
| 1994-95                               | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 3            | 5            | 6            |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 5            | 6            |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Ոչ ազատ      |
| 1995-96                               | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 4            | 4            | 6            |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 5            | 6            |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Ոչ ազատ      |
| 1996-97                               | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 5            | 4            | 6            |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 4            | 5            |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Ոչ ազատ      |
| 1997-98                               | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 5            | 3            | 6            |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 4            | 4            |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Մասնակի ազատ |
| 1998-99                               | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 4            | 3            | 6            |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 4            | 4            |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Մասնակի ազատ |
| 1999-2000                             | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 4            | 3            | 6            |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 4            | 4            |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Մասնակի ազատ |
| 2000-01                               | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 4            | 4            | 6            |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 4            | 5            |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Մասնակի ազատ |
| 2001-02                               | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 4            | 4            | 6            |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 4            | 5            |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Մասնակի ազատ |
| 2003                                  | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 4            | 4            | 6            |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 4            | 5            |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Մասնակի ազատ |
| 2004                                  | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 4            | 4            | 6            |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 4            | 5            |

| «Ազատությունը աշխարհում» հրապարակումը | Ինդեքսների անվանումը                  | Հայաստան     | Վրաստան      | Ադրբեջան |
|---------------------------------------|---------------------------------------|--------------|--------------|----------|
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Ոչ ազատ  |
| 2005                                  | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 5            | 3            | 6        |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 4            | 5        |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Ոչ ազատ  |
| 2006                                  | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 5            | 3            | 6        |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 3            | 5        |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Ոչ ազատ  |
| 2007                                  | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 5            | 3            | 6        |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 3            | 5        |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Ոչ ազատ  |
| 2008                                  | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 5            | 4            | 6        |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 4            | 5        |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Ոչ ազատ  |
| 2009                                  | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 6            | 4            | 6        |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 4            | 5        |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Ոչ ազատ  |
| 2010                                  | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 6            | 4            | 6        |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 4            | 5        |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Ոչ ազատ  |
| 2011                                  | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 6            | 4            | 6        |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 3            | 5        |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Ոչ ազատ  |
| 2012                                  | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 5            | 3            | 6        |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 3            | 5        |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Ոչ ազատ  |
| 2013                                  | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 5            | 3            | 6        |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 3            | 6        |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Ոչ ազատ  |
| 2014                                  | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 5            | 3            | 6        |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 3            | 6        |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Ոչ ազատ  |
| 2015                                  | «Քաղաքական իրավունքների ինդեքս»       | 5            | 3            | 7        |
|                                       | «Քաղաքացիական ազատությունների ինդեքս» | 4            | 3            | 6        |
|                                       | Ազատության վարկանիշը                  | Մասնակի ազատ | Մասնակի ազատ | Ոչ ազատ  |